«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Նուագույն տեղեկատվական տեղնոլոգիաների ազդեցությունը և դերը սովորողի հոգեբանական զարգացման գործում

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Մուշեղյան Սյուզաննա

Ուսումնական հաստատություն՝ Ոսկեհատի Խրիմյան Հայրիկի անվան միջնակարգ դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն

1 . Գրական ակնարկ

2. Համացանցը և նրա ազդեցությունը երեխաների նյարդային համակարգի վրա

3. Համացանցի ազդեցությունը երեխայի խոսքի զարգացման վրա

4. Համացանցի ազդեցությունը ուսումնական առաջադիմության վրա

5. Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների առաջընթացի հոգեբանամանկավարժական որոշ հայեցակետերի մասին

6. Եզրակացություն

7. Օգտագործված գրականություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նոր ժամանակների առանձնահատկություններից մեկն այն է, որ իրականության բոլոր ոլորտներում զարգացման տեմպերն արագանում են. մեր աչքի առաջ հնանում են գիտելիքները, տեխնիկան, աշխարհի մասին պատկերացումները, փոփոխվում են բարոյական նորմերն ու բարքերը: Մարդը բառացիորեն հայտնվել է տեղեկատվական հեղեղում, որի հորձանքներին դիմակայելը դարձել է կենսական խնդիր: Այս պայմաններում սովորողներին հաղորդել որոշակի գիտելիքների գումար և ձևավորելինչ-ինչ կարողություններ միանգամայն անօգուտ է: Անհրաժեշտություն է առաջանում նախևառաջ սովորողների մեջ ամրապնդել այն համոզմունքը, որ հասարակության ակտիվ անդամ դառնալու և տարազան գործընթացներից անմասնչմնալու համար նրանց հարկավոր է ամբողջ կյանքում սովորել: Եվ դպրոցի խնդիրն է աշակերտի մեջ ձևավորել նրա շարունակական կրթության հնարավորությունն ապահովող անձնային և ինտելեկտուալ որակներ:

Մենք տեսնում ենք, որ աննկատելիորեն փոխվում է կրթվածության երբեմնի ըմբռնումը: Կրթված մարդն այլևս նա չէ, ով ինչ-որ բան գիտի կամ գիտեցածը կարող է կիրառել իրականության մի նեղ ոլորտում, այլ նա ով ընդունակ է ինչ-որ բան իմանալու: Այսինքն՝ գնահատվում է ոչ այնքան ուսյալությունը, որքան ուսանելիությունը՝ մարդու սովորելու, ոչ ստանդարտ իրավիճակներից գլուխ հանելու, նրանցում արդյունավետ գործելու ունակությունը:

Թեմայի արդիականությունը՝ Գիտելիքների արագ զարգացման և նրանց մի մասի հնացման պայմաններում ուսուցման բովանդակությունը ևս կրում է համապատասխան փոփոխություններ. սովորողներին տալ հիմնարար գիտելիքներ, այն ինչ համեմատաբար կայուն է ժամանակի մեջ: Եթե սովորողը տիրապետում է տվյալ գիտության հիմունքներին և ընդունակ է սովորելու, ապա նոր իրավիճակներում նա կարող է գիտելիքների պակասը լրացնել ինքնուսուցմամբ: Ուսուցման տեխնոլոգիան կամ կիրառվող մեթոդները լավագույնն են, եթե լավագույնս նպաստում են մարդու ինքնուրույնության ձևավորմանը, հիմնարար գիտելիքների ձեռքբերմանն ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Համակարգիչը երեխային օգնական

Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաները մարդկային կյանքի,ողջ հասարակության համար ստեղծել են նոր աշխարհ :Մարդը մուտք է գործել տեխնոլոգիաների նոր դարաշրջան ,որն արագ տեմպերով փոփոխության է ենթարկել նրա կյանքը:

Մարդկային կյանքի ոչ մի անկյուն զերծ չի մնացել այդ ազդեցությունից:

Աշխատանքային և սոցիալական միջավայրերի,դրանցում գործածվող տեխնոլոգիաների հաճախակի փոփոխությունները մեր օրերի մարդուն ստիպում

են անընդհատ յուրացնել նոր գիտելիքներ և հմտություններ,պատրաստ լինել շարունակական ուսման:Տեղեկատվական դարաշրջանում կրթության մեջ կատարվող արմատական փոփոխությունը սերտորեն առնչվում է տեղեկատվության և հաղորդակցության արդի միջոցների զարգացման և տարածման հետ:Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը հնարավորություն կտա լուծել մի շարք կիրառական խնդիրներ ուսումնական գործընթացի օպտիմալացման համար ,բարձրացնելով ակտիվ դերը տարբեր տեսակի գործունեությունների մեջ,այդ թվում նաև զարգացնելով նրա մոտիվացիան կրթական գործունեության համար,որն իր հերթին ազդում է ուսումնական գոծընթացի որակի
բարձրացման վրա:

Մանկավարժական տեսանկյունից դիտարկվում են հետևյալ խնդիրները .

- Ուսուցման որակի ապահովում և կրթական բաց համակարգերի կառավարմանսկզբունքներ
- Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները լրացուցիչ կրթության մեջ
- Նոր տեղեկատվական տեխնոլոգիաները `որպես ստեղծարար կարողությունների և մասնագիտական կողմնորոշման միջոց
- Տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը անհատի մտավոր զարգացմանվրա
- Տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը երեխաների հոգեբանական զարգացման վրա

Այսօր ժամանակները փոխել են ամեն ինչ և իրենց կնիքն անգամ մանկության ու պատանեկության վրա են թողնում: Սրանք կյանքի կարևոր և հիանալի փուլեր են ,որոնք մեզանից յուրաքանչյուրը ուրախությամբ և մեծ սիրով է հիշում:

Իսկական մանկությունը լի է ազնվությամբ ,միամտությամբ ,անհոգ է ,ուրախ, առանց պահանջների և կամակորությունների:ԵՎ հենց մանուկներն ունեն աշխարհում ամենաթանկ բանը՝մաքուր հոգի ու միտք:Նախկին բակային և մանկական խաղերին փոխարինելու են եկել հեռուստացույցը ,համակարգիչը,բջջային հեռախոսը:

Հետաքրքրություններն այսօր փոխվել են: Այժմ երեխաներին հետաքրքրում են համակարգչային խաղերը և շփումները սոցիալական ցանցերում:Այժմ երեխաների մեծմասը իր մանկությունն անց է կացնում համակարգիչների ,հեռախոսների առաջ:

Հատկապես կրտսեր դպրոցականների տարիքին հատուկ է հետաքրքրասիրությունը, հուզական բարձր գրգռվածությունը :

Ասված խոսքը,վառ գույները ,դիտած կինոնկարը ,կարդացած հեքիաթը ամբողջությամբ գրավում,կլանում են երեխաներին:Կրտսեր դպրոցականների տարիքի մյուս առանձնահատկությունը ընդօրինակումն է :Նրանք շատ սիրում են կրկնել ու վերարտադրել մեծերի ,հերոսների շարժումները ,վարքի գծերը:

Հաշվի առնելով այս տարիքին բնորոշ վերը նշված առանձնահատկությունները բացահայտենք ,թե ի՞նչ ազդեցություն կարող են ունենալ նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաները երեխաների վրա և ի՞նչ խնդիրներ կարող են առաջացնել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Երեխայի հոգեկան ու ֆիզիկական զարգացման օրինաչափությունների, դրանց դրսևորման առանձնահատկությունների մասին ժամանակակից հոգեբանությունը կուտակել է բավական փաստեր, որոնք մանկավարժներն անհրաժեշտաբար պիտի հաշվի առնեն ուսուցման մեթոդներ մշակելիս, ուսուցման պրոցեսի կազմակերպման խնդիրներ լուծելիս: Որոշակիության համար հոգեբանական նվաճումների հարուստ գանձարանից առանձնացնենք մի քանի ղեկավար գաղափարներ:

Երեխան ամենից առաջ զարգացող էակ է և զարգացումն այդ ենթակա է քիչ թե շատ կոշտ օրինաչափությունների: Յուրաքանչյուր տարիքում մարդը հասնում է զարգացման մի միջին մակարդակի, որն հնարավորություն է տալիս նրան յուրացնել-իմաստավորել աշխարհի մասին գիտելիքների ու հասկացությունների մի սահմանափակ ոլորտ: Այն բոլոր գիտելիքները, որոնք գտնվում են այդ ոլորտից դուրս՝ նա չի կարող յուրացնել, սեփականել: Բարդ ուսումնական ծրագրերն ու դասագրքերը այս ղեկավար գաղափարի անտեսման՝ մարդու ֆիզիկական և հոգեկան զարգացման օրինաչափությունների չիմացության ու չկիրառման արդյունք են: Սրանով է պայմանավորված հանրակրթական դպրոցներում ուսման հանդեպ սովորողների նկատելի անտարբերությունը:

Տարիքային յուրաքանչյուր փուլ բնութագրվում է ոչ միայն իմացական զարգացման որոշակի պոտենցիալ հնարավորություններով, այլ նաև մտածողության տիպով: Այդ տիպի հաշվառումն ուսուցման պրակտիկայում անհրաժեշտ պայման է՝ կրթության յուրաքանչյուր աստիճանում զարգացման բավարար մակարդակ ապահովելու համար: Օրինակ, հանրահայտ է, որ մանկահասակ երեխայի մտածողությունն ակնառու-պատկերավոր (ո՛չ վերացական) բնույթ ունի: Սա նշանակում է, որ այս տարիքի երեխաների ուսուցումն արդյունավետ է եթե այն իրագործվում է պրակտիկ գործունեության միջոցով, որի պայմաններում սովորողը շատ բաներ հասկանում է սեփական փորձով: Համապատասխան դասագրքերն, իրենց հերթին, պետք է հարուստ լինեն նկարազարդման նյութերով, տեքստերը հեղեղված չլինեն սահմանումներով ու բանաձևերով:

Մարդն առհասարակ, երեխաները՝ առավել ևս, հակված են ամեն ինչի մեջ իմաստ տեսնելու: Այն գիտելիքներն են անցնում երկարատև հիշողության ոլորտ, որոնք մարդը գիտակցաբար

ցանկացել է յուրացնել: Այսինքն՝ երեխայի համար ուսուցումն արդյունավետ է միայն այն ժամանակ, երբ ինքն է իր կրթության սուբյեկտը. երբ ինքն է գիտակցաբար դնում կրթական նպատակներ և ազատորեն կազմակերպում իր ուսումնական գործունեությունը՝ դրված նպատակներին հասնելու համար: Այս դեպքում է միայն գիտելիքն անձի համար իմաստ ու արժեք ստանում, դառնում հոգևոր հարստություն:

Անդրադառնանք երեխայի զարգացման հոգեբանական մեխանիզմներին. երեխան ուզում է ակնառու պատկերացնել, նրան հարկավոր է պրակտիկ գործունեություն, բնության հետ կենդանի շփում: Երեխան ուզում է իրեն մատուցվողգիտելիքների իմաստն հասկանալ:

Ուսուցումն ու դաստիարակությունը անխզելի միասնություն են կազմում և իմաստալից է խոսել միայն ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման մասին: Սակայն, կրթական պրակտիկայում դաստիարակության և ուսուցման ոլորտները նկատելի չափով տարանջատվում են, ինչը հնարավորություն չի տալիս ապահովելու կրթության ընդհանուր որակի ցանկալի մակարդակ:

Թեև ուսուցմամբ կարելի է դաստիարակչական որոշակի խնդիրներ լուծել, սակայն մատաղ սերնդին հանրության համար կարևոր նշանակություն ունեցող արժեքների պատվաստումն իրականացվում է հիմնականում այլ գործոնների շնորհիվ: Դա ժողովրդավարական համակարգի տարրերի առկայությունն է հասարակական կառուցվածքներում, ուսումնական գործընացի ընդհանուր կուլտուրան է, կրթական համակարգում հաստատված բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը, սովորողների և ուսուցիչների հարաբերությունների ժողովրդավարական ոճը, ի վերջո՝ օրենքի գերակայության հաստատումն ու նրա հարգումը կրթության բոլոր սուբյեկտների կողմից: Կարճ ասած, դաստիարակության մեջ որոշիչը միջավայրն է. եթե հասարակությունն ինքը չի ապրում ժողովրդավարական արժեքներով, դրանք չի կարող մատուցել և ստիպել նրանցով ապրել իր սերունդներին: Մարդն ընդօրինակում և վարքի նորմա է դարձնում այն ամենը, ինչ տեսնում է, ինչի ներգործությունն իր վրա զգում է, ինչը կարևորում է իր սոցիալական առաջընթացի ու բարոյական հասունացման համար: Ուրեմն դաստիարակության ու սոցիալականացման խնդիրներում խոսքն ու խրատը, քարոզը, արհեստականորեն ստեղծված կարգ ու կանոնը որոշիչ չեն, որոշիչ են կրթության սուբյեկտների միջև հարաբերությունների ընդհանուր կուլտուրան, աշխատանքային և ուսումնական նորմալ պայմանները, ուսումնական պրոցեսում սովորողների ազատության և ինքնուրույնության աստիճանը, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը:Դաստիարակության ընդհանուր ռազմավարության և օպտիմալ տեխնոլոգիաների բացակայության պայմաններում ուսուցչի դերն առավել կարևորություն է ստանում: Ուսուցչի բարոյական նկարագիրը, մեթոդական պատրաստվածության մակարդակը, նրա անձնային ու ինտելեկտուալ որակները դաստիարակչական մեծ ներուժ ունեն:

1. Համացանցը և նրա ազդեցությունը երեխաների նյարդային համակարգի վրա

Այսօր հոգեբանները և գիտնականները միաձայն պնդում են ,որ նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաները առաջին հերթին ազդում են երեխայի զարգացող նյարդային համակարգի վրա ,որն էլ անդրադառնում է երեխայի առողջության և վարքի վրա :Այն ստեղծում է հիպնոտիկ դաշտ ,որն էլ ստիպում է երեխաներին ժամերով գամվել էկրանի առաջ :

Դիտման ժամանակ ակտիվանում է աջ կիսագունդը ,որը պատասխանատու է զգացմունքային ռեակցիաների համար: Երեխան նյարդային է դառնում ,կռվարար,զայրացկոտ: Ամեն առիթով երեխան ոչ միայն լաց է լինում ,այլև դադարում է լսել ծնողներին:

2. Համացանցի ազդեցությունը երեխայի խոսքի զարգացման վրա

Երեխան խոսել սովորում է առաջին հերթին ծնողներից:Բայց ծնողները հիմա շատ զբաղված են,խոսելու ժամանակ չունեն:Մարդիկ մեծ մասամբ լռում են : Ծնողները ավելի քիչ են շփվում երեխաների հետ ,որի պատճառով երեխան մտավոր զարգացում չի ունենում,ավելի ուշ է սկսում խոսել,քան իր հասակակիցները:

Հետազոտությունների արդյունքում օրինակ պարզվել է ,որ Բուլղարիայում նախադպրոցականների 21-27%-ը տառապում է խոսքի խանգարումներով: Դրա հիմնական պատճառը գիտնականները համարում են ընտանիքում տիրող լռությունը:

Եթե մեկը խոսում է ,իսկ մյուսը `լռում,ապա նրանք երկուսն էլ հայտնվում են շարժումների ու խոսող պատկերների ոլորտում,պատկերների ծովում,որը կարծես, ողողում է նրանց մարմինը:Այդ ոլորտում կարևոր է ոչ միայն խոսքի իմաստը ,այլ նաև այն ամենը,ինչը կարելի է անվանել խոսքի կամ լեզվի մեղեդի`խոսքի տեմբրի, շեշտի,դադարի միջոցով ձևավորվող խոսքի ռիթմիկ կառուցվածք:

Խոսքի այս տարրերը փոքրիկի վրա ավելի ուժեղ ազդեցություն են ունենում ,քան պատմածի բովանդակությունը:Սակայն խոսքի այդ բնական ուժը չի գործում ,եթե այն հնչում է մեքենայի կողմից:Այդ ներգործությունը կարելի է առաջացնել միայն կենդանի շփման ժամանակ:

Երեխայի ֆիզիկական և հոգևոր ներդաշնակ զարգացման համար անհրաժեշտ էմարդ,որը կդառնա բառի միջնորդը: Միայն այդ դեպքում բառը երեխայի եսը գերզգա- յական ոլորտից կուղեկցի զգայական ոլորտ:

3. Համացանցի ազդեցությունը ուսումնական առաջադիմությանվրա

Որքան վաղ հասակից է երեխան տարվում վիրտուալ աշխարհով ,այնքան տուժումէ առաջադիմությունը,քանի որ ծանրաբեռնվում է ուշադրությունը ,լսողական և տեսողական համակարգերը: Երեխան պետք է միշտ ակտիվ շարժվի ,ձեռք բերի նոր հմտություններ ,նկարի,կառուցի,իսկ համակարգչի առաջ երեխան պասիվ է :Էկրանի առաջ ավել ժամանակ անցկացնելուց երեխաների մոտ առաջացել են բառապաշարի ,մաթեմատիկական կարողությունների հետ կապված խնդիրներ: Համացանցային կախվածությանը զուգահեռ մարդկանց մեջ վերանում է գիրք կարդալու ցանկությունը:Իսկ եթե չկա ակտիվ ընթերցող ,ուրեմն չկա նաև ակտիվ մտածող:

Այն երեխաները ,որոնք չարաշահում են համակարգիչը ավելի դժվար են քնում,գիշերները հաճախ են արթնանում ,մղձավանջներ են տեսնում:Այս բոլոր բարդությունները շարունակվում են նաև ավելի մեծ տարիքում :

Երկար ժամանակ էկրանի առաջ նստած երեխաների մոտ առաջանում է գիրացման խնդիր: Էկրանը քնի և արթմնի սահմանային վիճակների է բերում ոչ միայն գիտակցությունը ,այլև օրգանիզմի ամբողջ նյութափոխանակությունը:Էկրանի առաջ պուլսը դանդաղում է 10%-ով:

Երեխաների հոգեկան կառուցվածքի վրա ազդում է դաժանությունը,արյունը,որը անընդհատ հոսում է էկրաններից ,սպանությունները: Այս ամենը ձևավորում է անբնական վերաբերմունք մահի նկատմամբ:

Նույնը կարելի է ասել սեռերի միջև հարաբերությունների մասին ,որոնք նույնպես կրկնօրինակվում են:

Երբ մարդը պարբերաբար նայում է դաժան տեսարաններով ֆիլմեր հուզական արձագանքները նման երևույթների նկատմամբ թուլանում են:Երեխան աստիճանաբար սովորում է բռնությանը և սկսում է սառնասրտորեն այդ ամենը վերարտադրել : Ագրեսիվ վարքին կարող են նպաստել նաև համակարգչային բռնի խաղերը ,ընկերները,ընտանիքի արժեքներն ու ընդհանուր կենսամակարդակը:

1990-ական թթ. մի խումբ գիտնականներ փորձ կատարեցին: Տարրական դասարանի երեխաներին բաժանեցին երկու խմբի :Մի խմբին ցուցադրեցին դաժանություն պարունակող ,մյուսին՝առանց դաժանության հեռուստանյութեր:Այն երեխաները ,ովքեր մեկ դրվագ էին դիտել օր. ՝«Անհաղթահարելի ռենջերները» ֆիլմից ,դիտումից հետո երկու րոպեի ընթացքում ցուցաբերեցին յոթ անգամ ավելի շատ ագրեսիվ պահվածք,քան այն երեխաները ,ովքեր չէին դիտել այդ ֆիլմը:

Դիտումն ու ընդօրինակումը ամենարդյունավետ ուսուցման մեխանիզմներից են

,այդ պատճառով արժե լուրջ մտածել թե մեր փոքրիկները ինչ համակարգչային խաղեր են խաղում ,ինչ մուլտֆիլմեր և հաղորդումներ են դիտում:

Փոքրիկները հաճախ են նմանակում մուլտֆիլմերի հերոսների դեմքի միմիկան և շարժումները,ձևերն ու վարքագիծը:Մուլտֆիլմերը որոնց հերոսներին հատուկ են նրբանկատությունը,բարությունը այդքան էլ շատ չեն:Ավելի շատ են ագրեսիվ և դաժան հերոսներով մուլտֆիլմերը:

Պետք է հիշել մի ոսկե կանոն ՝երեխային միայնակ պիտի չթողնել էկրանի առջև:Պիտի վերահսկել ,թե ինչ է նայում նա,օգնել ,որպեսզի փոքրիկը սխալ չընկալի ասելիքը:

Համակարգիչների ի հայտ գալը և կայծակնային տարածումը տնտեսության զարգացման տեսանկյունից դրական երևույթ է ,սակայն համակարգչային տեխնոլոգիաներից օգտվողների թվի աճի և համացանցի ընդլայնման հետ հանդիպում ենք նաև մարդու հոգեկան ոլորտի վրա համակարգիչների բացասական ազդեցության երևույթների: Համացանցն այսօր ոչ միայն կապ և տեղեկատվություն է տրամադրում ,այլև այնտեղ արծարծվում և բարձրացվում են սոցիալ-մշակութային բազմաթիվ խնդիրներ
,որոնց լուծումը հաղորդում է դրանց նոր բովանդակություն:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԻ ՄԱՍԻՆ

Վերջին տասնամյակներին տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը հեղափոխական փոփոխություններ կատարեց մարդկային գործունեության տարբեր բնագավառներում. ժամանակակից մարդը քաղաքակրթական զարգացումների ներկա փուլում ժամանակին համահունչ կերպով ապրելու և գործելու համար իր առօրյայում համակարգչային տեխնոլոգիաներ կիրառելու անհրաժեշտություն է զգում, քանի որ դրանց օգտագործումը առաջադիմական բազում փոփոխություններ է մտցնում մարդկային գործունեության տարբեր ոլորտներում, որակապես փոխում զանգվածային լրատվության միջոցների, կապի համակարգերի աշխատանքը, դրամատների և վարչական հիմնարկների գործունեության սկզբունքները, անհամեմատ բարձրացնում է զինվորական տեխնիկայի հզորությունն ու արդյունավետությունը: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները, մասնավորապես համակարգիչը կարող է ամենատարբեր աշխատանքներ կատարել, և ամեն ինչ կախված է նրանից, թե մարդն ինչպես է ուզում այն օգտագործել, քանզի բազմաթիվ հետազոտություններ բացահայտել են մարդու, մասնավորապես, դեռահասի (քանի որ այս հարցում նա է հասարակության առավել խոցելի օղակը) հոգեկան առողջության վրա համակարգչային տեխնոլոգիաների ինչպես դրական, այնպես էլ բացասական ներգործության հնարավորությունները : Նշենք, որ այդ հետազոտություններից շատերը իրականացվել են հենց համակարգիչների (համացանցի) օգնությամբ, քանի որ համակարգիչները հարմար միջոց են հոգեբանական ստուգումներ իրականացնելու համար (օրինակ՝ աշխատանքային սեղանին որպես ֆոն դրված նախշի դիտարկումով հնարավոր է անցկացնել յուրօրինակ հոգեբանական թեստ, որի միջոցով հարմար է ուսումնասիրել տվյալ անձի հոգեբանական պրոյեկցիայի մեխանիզմը, այսինքն՝ մարդու գաղտնի պատկերացումները, այդ թվում՝ սեփական անձը և խնդիրները, որոնք նա փոխադրում է ձեռքի տակ եղած նյութի՝ տվյալ դեպքում ցուցասարքի վրա (ծրագրավորվող պատկեր), ինչպես նաև հոգեշտկիչ աշխատանքներ անցկացնելու համար (օրինակ՝ համակարգչային դիզայնը դիտարկելով որպես արտ–թերապիայի տարր՝ հնարավոր է բազմաթիվ հոգեշտկիչ աշխատանքներ իրականացնել՝օգտագործելով արտ–թերապիայի և անիմաթերապիայի հնարավորությունները):

Հարց է առաջանում՝ հոգեբանամանկավարժական ինչ սպառնալիքներ է պարունակում «համակարգչային և համացանցային» առօրյան հատկապես դեռահասների և պատանիների հոգեբանական տեսանկյունից փխրուն խմբի համար: Հարցի պատասխանը կգտնենք դիմելով հոգեբանների հետազոտության արդյունքներին, որը ներկայացնում ենք գծապատկերի տեսքով :



Համակարգչաֆոբիան մարդու վախն է արագ կատարելագործվող

տեղեկատվական միջավայրից, տեղեկության հոսքերի աճից ու բարդացումից, համակարգչի չափազանցված բացասական ազդեցությունից: Համակարգչամոլությունը համակարգչի հետ գործ ունենալու հիվանդագին ձգտումն է՝ի վնաս միջանձնային շփման և հոգեկան առողջ հասունացման ու սոցիալականացման: Համակարգչամոլությունը հանգեցնում է կախվածության համակարգչային վիրտուալ իրականությունից: Համակարգչային վիրտուալ իրականությունից կախվածություն կարելի է անվանել կյանքում համակարգիչներով, համացանցով չափազանց տարվածությունը. դա իրականությունից հեռանալու միջոց է և հանգեցնում է սոցիալական, մասնագիտական, նյութական և ընտանեկան արժեքների խեղաթյուրման կամ որակական փոփոխությունների: Հատուկ ուշադրություն է պետք դարձնել, թե դեռահասը հատկապես ինչով է տարվել՝

վիրտուալ ծանոթություններո՞վ, առցանց սակարանային գործառնություններո՞վ, թե՞ համակարգչային խաղերով (առանձնահատուկ վտանգավոր են այն դերային խաղերը, որոնցում մարդն սկսում է կորցնել կապն իրական կյանքի հետ՝ լիովին կենտրոնանալով խաղի վրա (իրեն փոխադրելով վիրտուալ աշխարհ՝ նա բացարձակապես լուրջ է ընդունում վիրտուալ աշխարհը և իր հերոսի գործողությունները համարում սեփականը):

Ժամանակակից տեխնոլոգիաների արագընթաց զարգացումը իրավունքի բնագավառում առաջացնում է նոր հիմնախնդիրներ և ստեղծում դրանց առավել արդյունավետ հաղթահարելուն ուղղված լուծումներ գտնելու նոր հնարավորություններ: Մտավոր սեփականության իրավունքը, լինելով իրավունքի հնագույն ինստիտուտներից մեկը, ավելի լայն կիրառում ստացավ և պաշտպանության արժանացավ համացանցի առաջացմամբ: Ստեղծագործությունը, որը մարդու ստեղծագործական մտքի գործունեության արդյունք է, և օրենքի ուժով համապատասխանորեն չպաշտպանվելու դեպքում հեղինակի համար իրավական տեսանկյունից խոցելի երևույթ, առավել կարևորվեց համացանցի լայն օգտագործման հետևանքով: Դրա հիմնական պատճառներից մեկն այն է, որ ժամանակակից տեխնոլոգիաների զարգացման արդյունքում գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունների հեղինակները իրենց ստեղծագործությունների հրապարակումը, տարածումը և այլ կերպ դրանց հրապարակային ցուցադրումն են կազմակերպում համացանցային հարթակի միջոցով, և դրանով առաջացնում և պահպանում են իրենց ստեղծագործությունների նկատմամբ գույքային և անձնական ոչ գույքային իրավունքները՝ համապատասխանաբար ստանձնելով նաև պարտականություններ: Մասնավորապես, ըստ զանազան վիճակագրական տվյալների, տեսալսողական բնույթի ստեղծագործությունները համացանցի միջոցով տարածվում և լիաբեռնվում են առավել լայն մասշտաբով և հաճախականությամբ:

Այսպիսով, ժամանակակից տեխնոլոգիաների արագ զարգացման արդյունքում առաջ են գալիս վերը նշվածի հետ կապված մի շարք

խնդիրներ, որոնց նկատմամբ թերի ուշադրությունը կարող է հանգեցնել անբարենպաստ հետևանքների, մասնավորապես, ստեղծագործության հեղինակ, համահեղինակ ճանաչվողների և /կամ/ կոլեկտիվ հիմունքներով ստեղծագործությունը կառավարող կազմակերպությունների համար: Այդպիսի խնդիրներից է հենց հեղինակային և հարակից իրավունքների նկատմամբ այլ անձանց կողմից ոտնձգությունների կանխումն ու կանխարգելումը, որի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է համապատասխան վերահսկողական գործընթաց և այն կիրարկելու համար նախատեսված մեխանիզմ: Այդօրինակ վերահսկողական գործընթաց ստեղծելու բարդությունն այն է, որ համացանցային հարթակը վերացական բնույթի այնպիսի անկայուն աշխարհ է, որտեղ մարդկանց (օգտատերերի) վարքագիծը (գործողությունը և /կամ/ անգործությունը) միշտ չէ, որ կառավարելի է, և հետևաբար, միշտ չէ, որ հնարավոր է օրենքով սահմանված վարքագծի կանոնները խախտող (խախտած) անձի ինքնությունը պարզել կամ այլ կերպ նույնականացնել և ենթարկել համապատասխան պատասխանատվության:

Այսպիսով, որպեսզի հստակ և լիարժեք հնարավոր լինի պատասխանել այն հարցին, թե հոգեբանամանկավարժական և իրավաբանական ինչ սպառնալիքներ է պարունակում

«համակարգչային և համացանցային» առօրյան հատկապես դեռահասների և պատանիների հոգեբանական տեսանկյունից փխրուն խմբի համար, անհրաժեշտ է՝ գիտության տարբեր բնագավառներ միավորվեն՝ բազմակողմանի հետազոտություններ կատարելու այդ ոլորտում, իսկ մանկավարժությունը, ղեկավարվելով «Հետազոտելով սովորեցրո՛ւ» ինովացիոն մեթոդով, պետք է գլխավորի աշխատանքը, քանի որ գիտաճյուղի գերխնդիրն առողջ սերնդի ձևավորումն է: Ցանկալի է, որ հնարավոր լինի պատրաստել նոր ձևաչափի մասնագետ՝ կրթության ոլորտի տեղեկութաբան–հոգեբան՝ իրավագիտական խոր գիտելիքներով, ինչը, կարծում ենք, հնարավոր է պատրաստել մանկավարժական բուհերի շրջանակներում, քանի որ մանկավարժական բուհում սովորողը ուսումնասիրում է ինչպես դասավանդման տարբեր մեթոդներ և մոտեցումներ («մանկավարժություն»), այնպես էլ հոգեբանական զանազան ասպեկտներ («հոգեբանություն») և տեխնիկական–տեղեկութաբանական հնարքներ («ինֆորմատիկա»), ստանում է նաև իրավագիտության հետ առնչվող անհրաժեշտ գիտելիքներ:

Օրինակ՝ նման մասնագետը ունակ կլինի հետագայում ինքնուրույն մշակելու ծրագրավորված ուսուցումը իրականացնող ծրագրային փաթեթ (որպես տեղեկութաբան՝ նա, կիրառելով իր գիտելիքները, կկարողանա մշակել ծրագրավորված ուսուցման համար նախատեսված ծրագրային փաթեթի ծրագրային մասը, լինելով հոգեբան՝ նկատի կունենա հոգեբանական տարբեր ասպեկտները, իսկ լինելով մանկավարժ՝ հաշվի կառնի ծրագրավորված ուսուցման մանկավարժական պահանջները) կամ լինելով կրթության ոլորտի տեղեկութաբան–հոգեբան՝ կկարողանա լուծել զանազան խնդիրներ, մշակել ճկուն և բազմագործառութային կիրառական փաթեթներ, որոնք հնարավորություն կընձեռեն լուծելու կրթական ոլորտում ծանրացած խնդիրներ, իրականացնելու զանազան հետազոտություններ, օրինակ՝ համեմատական վերլուծության հիման վրա որոշելու համակարգչից սովորողների կախվածության մակարդակը, լուծելու ինչպես ընդհանուր կրթության, այնպես էլ ինֆորմացիոն հոգեբանության հետ կապված մի շարք այլ խնդիրներ, որոնք պահանջում են բազմագործոն մոտեցում: Սա շատ կարևոր հիմնախնդիր է, որի արդիականությունը աստիճանաբար մեծանում է, ինչը

պայմանավորված է տեղեկութային հասարակության կայացման հարաշարժ գործընթացով, առավել կարևոր է կրթության զարգացման ներկա պայմաններում, քանի որ գիտությունը և տեխնոլոգիան զարգանում են միջառարկայական, ներառարկայական և բազմառարկայական մոտեցման համատեքստում: Եվ միայն համակարգային վերլուծության տեսակետից այս բոլոր խնդիրների ուսումնասիրությունը թույլ կտա նոր տեսանկյունից նայել մանկավարժության ոլորտում առկա խնդիրներին, ինչպես նաև բացահայտել նոր հեռանկարներ միջառարկայական հետազոտությունների տեսության մեջ, կապել բնական և հումանիտար գիտությունների մեկուսացած թվացող բնագավառները:

Այս ամենից զատ նաև պետք է նշենք, որ նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաներն ունեն նաև դրական ազդեցություն սովորողների հոգեբանական զարգացման վրա : Մեր հետազոտությունը ցույց է տալիս, որ եթե սովորողների տեղեկատվական տեխնոլոգիանելից օգտվելը դարձնել վերահսկելի և նպատակային, ապա այն կունենա իր դրական ազդեցությունը:

Այսօրվա մարդու կյանքում համակարգիչը հույժ կարևոր դեր ու նշանակություն է ստացել: Այն իր ծառայությունն է բերում նաև հանրակրթության ոլորտին: Էլեկտրոնային դասագրքերն ու ուսումնական նյութերն արդեն 'սպառնում' են հետին պլան մղել նրանց թղթային տարբերակները: Համակարգիչը տեղեկույթի ձեռքբերման ու հաղորդման ամենատարածված և ամենաարդյունավետ միջոցն է դարձել: Այս պարագայում առանձնահատուկ կարևորություն է ստանում սովորողների տեղեկատվական մտահասության (կոմպետենտության) պատշաճ մակարդակիձևավորման խնդիրը:

Տեղեկատվական մտահասությունը ենթադրում է տեղեկույթի տարբեր աղբյուրների (գրքեր, տեղեկատուներ, հանրագիտարաններ, բառարաններ, քարտեզներ) տեղեկատվական սարքերի (հեռուստացույց, մագնիտոֆոն, հեռախոս, ֆաքս, համակարգիչ, տպիչ, մո դեմ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (ձայնագրություն և տեսագրություն, էլեկտրոնային փոստ, ՁԼՄ, համացանց) օգնությամբ անհրաժեշտ տեղեկույթը ընտրելու, մշակելու, պահպանելու և հաղորդելու կարողություններ: Կարևորվում են ստացված տեղեկույթը քննադատորեն վերլուծելու, գնահատելու, այն տարբեր ձևերով ներկայացնելու և, սեփական գործունեությունը պլանավորելիս ու իրականացնելիս, դրանք առավելագույն արդյունավետությամբ օգտագործելու կարողությունները: Ուսուցչի խնդիրն է այստեղ համակարգիչը դարձնել սովորողների ուսումնական գործունեության կարևոր միջոց, կրթության ցածր աստիճաններում ապահովել համակարգչային գրագիտության բավարար մակարդակ, իսկ բարձր աստիճաններում ընդլայնել տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու հնարավորությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիանելի գործածումը սովորողների կողմից վերահսկելի դարձնելու դեպքում կարող ենք գրանցել դրական արդյունքներ և ազդեցություն սովորողների հոգեկան աշխարհի վրա։
- Ուսուցման տեխնոլոգիան կամ կիրառվող մեթոդները լավագույնն են, եթե լավագույնս նպաստում են մարդու ինքնուրույնության ձևավորմանը, հիմնարար գիտելիքների ձեռքբերմանն ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը:
- Կյանքը հասարակությանն ապրելու և գործելու նոր ռազմավարության է պարտադրում, և այդ նոր ռազմավարության մշակումն էլ ամենաընդհանուր իմաստով կազմում է ժամանակակից կրթական քաղաքականության բովանդակությունը:
- Մեր մանկավարժական պրակտիկայում բոլոր վերոհիշյալ մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն են տալիս բացահայտել և զարգացնել սովորողների գեղարվեստական ունակությունները, ստեղծագործական բնույթի հանձնարարությունների իրականացման կարողություն–ները նաև դաստիարակել ցանկացած գործունեությանը ստեղծագործական վերաբերմունքի ցուցաբերման հատկություն:
- Նորարար մանկավարժությունը պահանջում է ամբողջովին վերանայել մանկավարժական՝ ինչպես ուսուցման այնպես էլ դաստիարակչական գործընթացը, դիտարկել սովորողին որպես գործունեության սուբյեկտ

- Նոր տեղեկատվական տեխնոլոգիաները՝ սովորողներին տեղեկատվության պատրաստման և հաղորդման գործընթաց է, համակարգչի միջոցով, համապատասխան տեխնիկական և ծրագրային ապահովմամբ: Դա հնարավորություն է տալիս զարգացնել սովորողների գեղարվեստական և ստեղծագործական կարողությունները և լուծել նոր խնդիրներ, որոնք դեռևս լուծված չեն եղել:

Այսպիսով ապրելով գիտատեխնիկական ,ինֆորմացիոն հզոր և նորանոր հայտնագործությունների 21-րդ դարում ,երբ սրընթաց ստեղծվում ու կիրառվում են թվային և նանո տեխնոլոգիաներ,արհեստական ինտելեկտ ,երբ ինտերնետը իր լավ և վատ հատկություններով ու կիրառմամբ դարձել է մեր կյանքի անբաժան մասնիկը,մենք պետք է դաստիարակենք ու կրթենք այնպիսի գիտելիքներով սերունդ ,որը կկարողանա նավարկել և դիմակայել ժամանակի հրամայականներին :Մեր ամենամեծ հաղթանակներից մեկը կլինի այն ,որ աշակերտը գիտակցելով ինտերնետի կարևոր նշանակությունն ու ուժը կկարողանա ճիշտ կողմնորոշվել և այն կիրառել ի օգուտ իրեն,ի օգուտ մարդկության և հայրենիքի շահերին:

«Յուրաքանչյուր երեխա հանճար է ,յուրաքանչյուր հանճար՝երեխա: Նրանք երկուսն էլ սահմաններ չեն ճանաչում և բացահայտումներ են անում»:

Եվ ուրեմն այս բացահայտումների ճանապարհին մենք՝ծնողներս, պիտի լինենք մեր երեխաների կողքին :Ծնողները պիտի երեխաներին բացատրեն ,որ կայքերը կարող ենլինել «լավ և վատ»,որ համացանցում տարբեր մարդիկ են շփվում:

Անհրաժեշտ է ունենալ ծրագրային ապահովվածություն,որը կապահովի ծնողական վերահսկողության դերը:Անհրաժեշտ է ,որ ծնողները երեխաներին բավականին ժամանակ ,խնամք և հոգատարություն հատկացնեն: Երեխաները հաճախ համակարգչային աշխարհ են ընկղմվում նաև ընտանիքում անբավարար հուզական հարաբերությունների արդյունքում:

Անհրաժեշտ է որ ծնողները երեխաների մոտ վստահություն զարգացնեն,աջակցություն։Խրախուսեն,ընդգծեն հաջողությունները:

Պիտի ամեն ինչում գտնել ոսկե միջինը և ամեն բան կլինի ի օգուտ։ԵՎ ի վերջո չէ՞ որ մեր ողջ կյանքի իմաստը մարդու կատարելագործումն է:

Օգտագործված գրականություն

Վ.Մակարենկո <<Մեդիակրթությունը ժամանակակից աշխարհում>>

Մեթոդական ձեռնարկ <<Դեռահասների առողջություն և

զարգացում>>Բալայան Ա.Ս. <<Մանկավարժական հոգեբանության

հարցեր>>

Ալբերտ Նալչաջյան <<Հոգեբանության հիմունքներ>>

Մադոյան Ռ., Տ. Մադոյան, Ուսումնական գործընթացի արդիականացում կամ համակարգիչը դպրոցում, «Մանկավարժություն», 2012 թ.,